

Լեւոն եւ հանգոյց՝ իՏարսոն քաղաքի, այլ եւ տեղեկացեալ որպիսութեան զօրութեան նորին եւ ընտանեացն եւ որդւոց, եմուտ ընդ նմա՝ իդաշն ուխտի՝ առնուլ զորդի նորա զերրորդ եւ զհամանուն (կրսեր) Անդրեաս՝ ի փեսայ դեռաբոյս դստեր իւրոյ, եւ կարգել զնա թագաւոր Հայոց յետ իւր. եղեալ պայմանս՝ յոր յետոյ հաւանեցոյց եւ զպարոնայս իւր. եւ ոչ միայն բանիւ, այլ եւ գրով եւ երդմամբ հաստատեցին զդաշինսն, եւ առաքեցին զպատճէնն առ Քահանայապետն Ունրիոս՝ վաւերացուցանել սրբազան հեղինակութեամբ: Չեհաս՝ իձեռս մեր թուղթ Լեւոնի. իսկ Անդրեաս որ համաձայն նմին գրեր՝ յետ դարձի իւրում յերկիր իւր, յընթացս 1218 ամի (որպէս թուի՝ զի պակասի թուական թղթոյն), ծանուցանելով զիրացս եղելութիւն, ինդրէր ոչ միայն հաճել, այլ եւ հայրաբար խնամել զորդեակ իւր՝ զոր հանդերձեալ էր առաքել՝ իչայս, եւ յանձն եւս առնել՝ իննամս ասպետաց Հիւրատան եւ Տաճարի, միանգամայն եւ տնօրինել զպսակ տղահասակ խօսեցելոցն. եւ զայս, ասէ, կամեցեալ Լեւոնի՝ իզօրավիզն տէրութեան իւրոյ ընդդէմ այլազգեացն, եւ յօգուտ ազատութեան Սրբոյ երկրին, խնամութեամբ երկոցուն ազգացն. ինդրէր եւս զերկաքանչիւրոցն պայմաննամակս կնքել քահանայապետական կնքովն եւ դարձուցանել առ ինքեանս²²⁰: Չայս եւս պայմանեալ էին՝ զի եթէ եւ յառաջ քան զհարսնանալն մեռանէր Չապել, իրաւունք իցեն փեսային ժառանգել զթագաւորութիւն Լեւոնի՝ կենօքն չափ:– Չայս ամենայն քննեալ Ունրիոսի՝ հաստատեաց հակիրճ կոնդակաւ, նոյնաբան գրեալ առ երկոսին եւս թագաւորս, ի4 մարտի 1219 ամին. որոյ այս է պատճէն

²²⁰ ...Illustris enim Leo Rex Armeniæ, ut nostræ gentis et suæ glutinata in unum commercio ad confringendos vicinos atque juges Turcorum insultus, robustior existeret, filiam suam nostro filio tradidit in uxorem, totumque Armeniæ cum sua corona, juxta plenum suorum Baronum consensum atque juramentum in perpetuum jurisdictionem eidem filio nostro et suis heredibus, subjugavit. Ut igitur hæc omnia firma permanent, factum inter nos et Regem Armeniæ contractum, tam super matrimoniæ filiæ suæ cum filio nostro, quam de collatione sui diadematis ac regni, auctoritatis Vestræ munimine confirmatis. Petimus etiam quatenus nuptiarum commercio inter eos... in quibus maximum Terræ Sanctæ occultum divina providentia consilium procuravit, commodum, prout cujuslibet scripta protestantur, similis modo roboretis; et transmissas Sanctitati vestræ ab unoquoque principe litteras, cum apertæ coram vobis fuerint, iterato sub Vestra bulla nobis remittatis. Verum quia filii nostri quem in Armeniam transmittimus, immatura teneritas ad debitæ circumspectionis commoda non sufficit, Vestræ paternitatis profugis genibus a Vobis postulamus, quatenus memoratum puerum cum uxore et sibi assistentibus, in Vestræ protectionis suscipientes gremium, ut spiritualem in Christi filium, ad tuendum et fovendum sacratissimis Domibus Militiæ Templi, nec non Hospitalis, vice nostro, et mandato commendantes.